

մարմարով ծածկուած, բարեպաշտ ուխտաւորներու նախանձա-
յուզուութեան եռանդէն յառաջ գալիք փրասներէն ղերժ պահելու
զայն:

Նոյն եկեղեցիները 1137–1500

Սաչակիրք 88 տարիներէ աւելի չկրցան մնալ Ս. Երկրին
մէջ, կառավարողներուն անընդունակութեան, մանաւանդ ա-
նոնցմէ ոմանց փրասաբեր անհետատեսութեան պատճառաւ: Սա-
լահէտախն ստիպուեցաւ կրօնական պատերազմ հրատարակել և
չահել Հաղիլիի կոիւր, որով ան կարողացաւ փշրել Սաչակրաց
ոյժը ու 1187 ին յաղթականօրէն մտնել Երուսաղէմ. սոյն յաղ-
թանակը եղաւ Ս. Երկրի Լատին թագաւորութեան գերեզմանը:
Այս ժամանակ այն երկու եկեղեցիներն ալ, ուրիշ սրբավայրերու
նման կործանեցան:

Աւակերտարանը

Այս եկեղեցին այլևս փոխած էր իր անունը և յիշատակը,
յետագայ ուխտաւոր ուղեգիրներէն Jean Poloner (1422) և Fabri
(1480–83) կը նկարագրեն անոր աւերեալ վիճակը և կ'ողբան
անոր երբեմնի փառքը և գեղեցկութիւնը:

Բլուրը

Բրի Եկեղեցին թէև ծանր կերպով քանդուած, բայց անոր
մեծ մասը և սիւները դեռ կանգուն կը մնային. ներքին փոքր
չէնքը անմիջապէս նորոգուեցաւ. իսկ ամբողջ շէնքը կարելի է-
ղաւ նորոգել 1229 ին: Այս կործանումներուն հետեանքով ներ-
քին զարդերը ոչնչացած էին: Ժ՛. դարուն ան դեռ կը պահէր
իր ամբողջութիւնը, բայց Ժ՛Ե. ին վանտալութիւնը լրացուց իր
դերը, այնպէս որ սալարկուած մարմարներն ու սիւները պա-
տերէն խլելով ուրիշ տեղեր տարուեցան ու շէնքը՝ իր արեւել-
եան մասէն խոշոր պատով մը բաժնուած՝ կը ծառայէր գիւղա-
ցւոց բնակութեան և անասնոց պաշտպանութեան:

Նոյն եկեղեցիները 1500էն մինչեւ մեր օրերը

Աւակերտարանի եկեղեցին Ժ՛Զ. դարէն յետոյ այլևս բոլորովին
քանդուած էր, ինչպէս կը նկարագրեն ուղեգիրները: Ականա-